ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 23-Լ

ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԿԱՄ ՈՒՆԵՑԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քաղաքացիության մասին» օրենքի 13.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Սահմանել՝

1) այլ պետության քաղաքացիություն ունենալու կամ ունեցած լինելու մասին հայտարարության ձևը՝ համաձայն հավելված 1-ի,

2) այլ պետության քաղաքացիություն ունենալու կամ ունեցած լինելու մասին հայտարարությանը կցվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ համաձայն հավելված 2-ի:

ԳՆԴԱՊԵՏ **Վ.ՂԱԶԱՐՅԱՆ**

«03» 06 2021թ.

ք.Երևան

Հավելված 1
ՀՀ ոստիկանության պետի
2021 թվականի հունիսի 3-ի
N 23-Լ հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԿԱՄ ՈՒՆԵՑԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ես՝ _____
(հայտարարություն տրվող անձի անունը, ազգանունը, հայրանունը)

Ծնված՝ _____
(ծննդյան օրը, ամիսը, տարին)

ՀՀ քաղաքացու անձնագիր /նույնականացման քարտ/ _____
_____
(անձը հաստատող փաստաթղթերի սերիան, համարը, տրման ամսաթիվը)

Սույնով հայտնում եմ, որ՝

- ունեմ _____ քաղաքացիություն
(նշել պետությունը, որի քաղաքացին հանդիսանում է հայտարարություն տվող անձը)

- նախկինում ունեցել եմ _____
(նշել պետությունը, որի քաղաքացին հանդիսանում է հայտարարություն տվող անձը)

քաղաքացիություն, որը դադարեցվել է _____ թվականին:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը՝

1.
2.
3.

դիմող՝ _____ _____
(Անուն, Ազգանուն) (ստորագրություն)

« » _____ 202 թ.

Հավելված 2
ՀՀ ոստիկանության պետի
2021 թվականի հունիսի 3-ի
N 23-Լ հրամանի

ՑԱՆԿ

ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԿԱՄ ՈՒՆԵՑԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԿՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

Սահմանադրությամբ կամ օրենքով որոշակի պաշտոն ստանձնելու համար միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիության պահանջ սահմանված լինելու դեպքում այդպիսի պաշտոնին հավակնող կամ այդպիսի պաշտոն զբաղեցնող անձի կողմից այլ պետության քաղաքացիություն ունենալու կամ նախկինում ունեցած լինելու մասին տեղեկությունը Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնին ներկայացնելիս հայտարարությանը կցվում են՝

1. հայտարարությունը ներկայացնելու պահին օտարերկրյա պետության քաղաքացիություն ունենալու դեպքում՝
   1) ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
   2) Օտարերկրյա պետության քաղաքացու անձնագրի, իսկ դրա բացակայության դեպքում՝ օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից տրված՝ այդ պետության քաղաքացիություն ունենալը (ձեռք բերելը) հավաստող փաստաթղթի /տեղեկանք, քաղաքացիության մասին վկայական և այլն/՝ օրենքով սահմանված կարգով հայերեն թարգմանությունը:

2. Հայտարարությունը ներկայացնելու պահին օտարերկրյա պետության քաղաքացիությունը դադարեցված լինելու դեպքում՝
   1) ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
   2) Օտարերկրյա պետության իրավասու մարմինի կողմից տրված՝ այդ պետության քաղաքացիությունը դադարեցրած լինելու հավաստում՝ տեղեկանք կամ այլ փաստաթուղթ՝ տվյալ պետության քաղաքացիությունը դադարեցրած լինելու ժամկետի մասին նումով, և դրա օրենքով սահմանված կարգով հայերեն թարգմանությունը: